



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ  
ՈՐՈՇՈՒՄ**

----- 2018 թվականի N°Ա  
քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 3-Ի N°159Ա ՈՐՈՇՄԱՆ  
ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները և հաշվի առնելով «ՎԵՈՆ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի հունիսի 28-ի N°172/18-Ո11 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 3-ի «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված հեռախոսակապի «Այլընտրանքային բիզնես» սակագնային փաթեթը սահմանելու մասին» N°159Ա՝

1) որոշման վերնագրում, 1-ին կետում և հավելվածի վերնագրում «ԱրմենՏել» բառը փոխարինել «ՎԵՈՆ Արմենիա» բառերով,

2) որոշման՝

ա. հավելվածի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Սույն սակագնային փաթեթով ամրագրված սակագները առավելագույն մեծություններ են, դրան կարող են միանալ 200 և ավելի հեռախոսահամարներ ունեցող իրավաբանական անձինք՝ գրավոր դիմումի հիման վրա և 24 ամիս ժամկետով պայմանագիր կնքելու դեպքում:».

բ. հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով.

«3. Սույն սակագնային փաթեթի համար պայմանագրի կնքման ամսաթվից 24 ամիսների ընթացքում բաժանորդի նախաձեռնությամբ այն լուծելու դեպքում գանձվում է Հայաստանի Հանրապետության հանրային

ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի օգոստոսի 24-ի «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցվող ծառայությունների սակագների սահմանման մասին» №340Ն որոշման 1-ին կետով հաստատված №1 հավելվածով իրավաբանական անձանց համար նախատեսված «Գնային տարբերակ-1»-ով և սույն սակագնային փաթեթով (հաշվարկված ըստ ամիսների) սահմանված սակագների տարբերությունը: Սույն կանոնը կիրառվում է նաև «ՎԵՈՆ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության նախաձեռնությամբ բաժանորդի կողմից պայմանագրի պայմանները խախտելու հիմքով պայմանագրի լուծման դեպքում:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՎԵՈՆ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

**Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ**

ք. Երևան

----- 2018 թ.